երեր Ս. Առաքեալն Բարդուղիմէոս, և անդ է, ասում է, սբ. գերեզմանն Տրդատայ Թագաւորին և Աշխէն տիկնայ և Խոսրովիդխտոյն, և կոչի սա Հաշտէն գաւառ և այլն. հակասութիւնները շատ պարզ են. Հոգեաց վանքը Տիգրիսի վերայ է Անձևացեաց գաւառում, այլ ոչ Ոստանում Վանայ ծովի վերայ, իսկ Հաշտէնը Արածանու հովտումն է. մի այլ տեղ նոյն Վարդանի աշխարհագրութեան մէջ ասուած է որ Արագածոտնի Կոշ աւանումն են «սբ. գերեզմանքն Յուսկան և Դանիէլին Թոռանց Ս. Լուսաւորչին». արդէն իմացանք, որ սբ. Յուսիկի գերեզմանը Թորդանումն է, իսկ սբ. Դանիէլ, որ սբ. Լուսաւորչի Թոռը չէ, այլ աշակերտը, Թաղուած է Տարոնի Հացեաց Դրախտ ասուած տեղում Ինանկնեան վանքի մօտերը։ Այս և այսպիսի ուրիշ շատ օրինակներից կարելի է տեսնել, որ կարելի չէ անպայման հաւատ ընծայել այդպիսի յիշատակարաններին։

Աչքի առաջ ունենալով Փաւստոս Բիւզանդի հաղորդած տեղեկութիւնները, որոնք անշուշտ աւելի արժանահաւատ և միևնոյն ժամանակ նախնական աղբիւրների վերայ են հիմնուած, կարելի է մակաբերել, որ Ս. Գրիգորի, Ս. Վրթանէսի, Ս. Յուսիկի, Ս. Տրդատի, Թերևս և այլ նոցա մերձաւորների, քնարանը Թորդան աւանն է. Ս. Արիստակէս և Ս. Ներսէս Մեծն ամփոփուած են Եկեղեաց գաւառի Թիլն աւանում, որ նոյնպէս Սեպուհի ստո-